



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍՊՈՐՏԻ ԵՎ
ԵՐԻՏԱՍԱՐԴՈՒԹՅԱՆ ՀԱՐՅԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

17 հուլիս 2017 թ. № 143 - Ա/1

ք. Երևան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏԱՐՎԱ 10 ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ»
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ ԿԱՆՈՆԱԿԱՐԳԸ ԵՎ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏԱՐՎԱ 10 ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ»
ՄՐՑՈՒՅԹԻՆ ՄԱՍՆԱԿՅԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐՎԱ
20 ԼԱՎԱԳՈՒՅՆ ԹԵԿՆԱԾՈՒ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ՈՐՈՇՄԱՆ ԶԱՓՈՐՈՇԻՉՆԵՐԻ
ՍԱՆԴՂԱԿԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի հուլիսի
12-ի № 825-Ն որոշման 11-րդ կետի 4-րդ ենթակետի՝ հրամայում եմ՝

1. Հաստատել՝

1) Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի
կազմակերպման և անցկացման կանոնակարգը՝ համաձայն № 1 հավելվածի,

2) Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթին
մասնակցելու համար Հայաստանի Հանրապետության տարվա 20 լավագույն թեկնածու
մարզիկների որոշման չափորոշիչների սանդղակը՝ համաձայն № 2 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2017 թվականի օգոստոսի 1-ից:



Հ. ՌՈՍՏՈՄՅԱՆ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ «ՏԱՐՎԱ 10 ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐ»
ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԵՎ ԱՆՑԿԱՑՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են Հայաստանի Հանրապետության «Տարվա 10 լավագույն մարզիկներ» մրցույթի (այսուհետ՝ մրցույթ) կազմակերպման և անցկացման կարգն ու պայմանները:

2. Մրցույթը կազմակերպվում է յուրաքանչյուր տարի՝ սույն կանոնակարգով սահմանված պայմաններով և կարգով:

II. ՄՐՑՈՒՅԹԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

3. Մրցույթի նպատակներն են՝

1) սպորտի միջոցով խթանել Հայաստան-Արցախ-սփյուռք կապերի ամրապնդումը և զարգացումը,

2) Հայաստանի Հանրապետության մարզիկների մարզական հաջողությունների գնահատման գործընթացում ներգրավել առավել մեծ թվով մասնագետների,

3) մեծարել սպորտում (օլիմպիական մարզաձևեր և ոչ օլիմպիական մարզաձևերից՝ ուշու, սամբո, շախմատ) ընթացիկ տարում նվաճումներ կամ նշանակալի հաջողություններ գրանցած, ինչպես նաև իրենց մրցելույթներով Հայաստանի և հայ ժողովրդի ճանաչելիությանը, հայոց պետական խորհրդանիշների, ազգային արժեքների հանրահռչակմանը նպաստած մարզիկներին,

4) խրախուսել սպորտի զարգացումը և մասսայականացումը:

III. ՄՐՑՈՒՅԹԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄՆ ՈՒ ԱՆՑԿԱՑՈՒՄԸ

4. Մրցույթի կազմակերպման և անցկացման աշխատանքները համակարգում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարությունը այսուհետ՝ Նախարարություն):

5. Մրցույթի կազմակերպչական աշխատանքներն իրականացնում է Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով ստեղծված հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), որի կազմում կարող են ընդգրկվել Նախարարության, Հայաստանի Հանրապետության այլ նախարարությունների, «Հայաստանի ազգային օլիմպիական կոմիտե» իրավաբանական անձանց միության, Հայաստանի Հանրապետության մարզաձևերի ֆեդերացիաների, մարզադպրոցների, սփյուռքի հայկական կառույցների ներկայացուցիչներ, անվանի մարզիկներ ու մարզիչներ, մարզական լրագրողներ, սպորտի հովանավորներ ու բարեգործներ: Հանձնաժողովը ձևավորվում է յուրաքանչյուր տարի մինչև տվյալ տարվա փետրվարի 15-ը:

6. Մրցույթի հաղթողները որոշվում են SMS քվեարկության և մրցույթի քվեարկության համար Նախարարության կողմից հավատարմագրված մարզական լրագրողների քվեարկության արդյունքների համադրմամբ:

7. Մրցույթի SMS քվեարկության անցկացման նպատակով Նախարարությունը սահմանված կարգով պայմանագիր է կնքում Հայաստանի Հանրապետությունում գործող հեռահաղորդակցության օպերատորական կազմակերպության (կազմակերպությունների) հետ:

8. Մարզական լրագրողների մասնակցությունը մրցույթի քվեարկությանն ապահովելու նպատակով Նախարարությունը ընթացիկ տարվա նոյեմբեր ամսին կազմակերպում է մարզական լրագրողների հավատարմագրում: Հավատարմագրվում են Հայաստանի Հանրապետությունում գրանցված և գործող լրատվամիջոցներում աշխատող կամ նրանց հետ համագործակցող այն մարզական լրագրողները, ովքեր տվյալ տարում ունեն առնվազն 10 իրադարձային կամ վերլուծական հրապարակում:

IV. ՄՐՑՈՒՅԹԻ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ

9. Մրցույթին կարող են մասնակցել Հայաստանի Հանրապետության դրոշի ներքո հանդես եկող մարզիկ-մարզուհիները:

10. Մրցույթի մասնակիցների առաջադրումը (շրջանակը) որոշվում է հետևյալ ընթացակարգով.

1) Նախարարությունը մինչև ընթացիկ տարվա դեկտեմբերի 10-ը հրապարակում է տվյալ տարվա ընթացքում մարզական բարձր ցուցանիշներ արձանագրած և Հայաստանի Հանրապետության սպորտի և երիտասարդության հարցերի նախարարի հրամանով հաստատված չափորոշիչներին համապատասխան ամենաբարձր միավորներ ունեցող 20 մարզիկների անվանացանկը (20-րդ տեղում հավասար միավորների դեպքում ընդգրկվում են հավասար միավորներ ունեցող բոլոր մարզիկները):